ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 04.01.2024թ. հ.072 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից նախատեսվում է իրականացնել Արարատյան փողոցում առկա կամրջի (Ներքին Չարբախի կամուրջ) վերանորոգման աշխատանքներ: Մրցույթում հաղթող է ճանաչվել «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲ ընկերությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա պահին քննարկումներ են իրականացվում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության մասնագետների հետ՝ շրջանցիկ ճանապարհի կահավորման նպատակով, դեռևս համաձայնագիր չի կնքվել աշխատանքները մեկնարկելու համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ կիրականացվեն քննարկումներ, ըստ առաջնահերթության, Խարբերդի ամառանոցներ տանող ճանապարհը, համապատասխան ծրագրի շրջանակներում, վերանորոգելու նպատակով:

Տեղեկացվում է նաև, որ Արարատի մարզի Մասիս համայնքի Խարբերդ գյուղից դեպի Նոր Խարբերդ թաղամաս տանող ճանապարհը (գերեզմաններին հարակից) գտնվում է Արարատի մարզի վարչական տարածքում և ասֆալտապատման աշխատանքներ պետք է իրականացվեն վերջինիս կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ